

Ս. Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ, Հովհ. Թումանյանը և արևելահայ գեղարվեստական գրականության լեզուն, Նրևան, Երևան, ԵՄԵՍՅԱՆ ԿՈՒՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, 1986, 319 էջ:

Հայ գեղարվեստական լեզվի ուսումնասիրության և մասնավորապես թումանյանագիտության նկատելի բացերը լրացնելու եկավ լեզվաբան Ս. Մելքոնյանի «Հովհ. Թումանյանը և արևելահայ գեղարվեստական գրականության լեզուն» ուշագրավ մենագրությունը: Առաջաբանում հեղինակը նշում է. «Մեր նպատակն է հղել Թումանյանի ողջ գեղարվեստական ստեղծագործության լեզվի և լեզվաբանական ժառանգության ուսումնասիրության հիման վրա ցույց տալ, թե որն է նրա մատուցած ծառայությունը արևելահայ գեղարվեստական լեզվի զարգացման գործում, այդ դիտարկումներից բացառել նրա լեզվի զարգացման ընթացքը, հիմնական յուրահատկությունները և լեզվամշակման ավանգների արդիական նշանակությունը» (էջ 3): Պարզ շարադրված, բավականին բարդ, տևական ու գործնական կարևոր նշանակություն ունեցող խնդիր է առաջադրել հեղինակը և, ասենք հենց սկզբից, դրա հաջող լուծումով հասել է իր նպատակին: Աշխատությունը գրված է նոր մոտեցումով, հարցադրումների ու քննությունների նոր եղանակներով, մեկնաբանությունների ու եզրահանգումների թարմությամբ և իր նյութին ու նպատակին համապատասխան կառուցվածք ունի: Այն բազկացած է երկու բաժնից և ամփոփումից:

Առաջին բաժնում (էջ 8—87) հեղինակն ուրվագծում է հարցի պատմությունը՝ օբյեկտիվորեն անդրադառնալով հայագիտության մեջ Թումանյանի լեզվի մասին եղած կարծիքներին (Մ. Աբեղյանի, Վ. Տերյանի, Ծ. Չարենցի, Ա. Բակունցի, Դ. Դեմիրճյանի, Ա. Ինճիկյանի, Գ. Սեվակի, Պ. Սևակի, Ռ. Իշխանյանի և այլոց): Բացահայտելով այն արժեքավորը, ինչ ձևեր է բերվել Թումանյանի լեզվի գնահատման հարցում՝ Ս. Մելքոնյանը միաժամանակ զգալ է տալիս իր անհամաձայնությունը թումանյանական լեզվամշակման գործունեության այնպիսի արժատական նշանակություն ունեցող խնդիրների մեկնաբանման հարցում, ինչպիսիք են նոր գրական հայերենի արևելյան ճյուղի զարգացման գործում մեծ քանաստեղծի մատուցած ծառայության բուն էությունը, նրա լեզվի շրջանառվածությունը, այդ լեզվի զարգացման տարրեր փուլերի յուրահատկությունները, Թումանյանի վերաբերմունքը գրական լեզվի զարգացման երկու հիմնական ուղղությունների (արությանական, հյուսիսարևելյան) նկատմամբ և այլն: Այստեղ անհրաժեշտ է նշել նաև այն ուշագրավ աշխատանքներ, որ կատարել է հեղինակը Թումանյանի լեզվի մասին Վ. Տերյանի ասույթները նորոգելի մեկնաբանելու, Չարենցի համապատասխան դատողությունները քննական վերլուծությամբ արժեքավորելու ուղղությամբ:

«Գեղարվեստական լեզվի հարցեր» գլխում (էջ 27—59) արծարծվում են տեսական ու գործնական բնույթի մի շարք խնդիրներ, ինչպես՝ գեղարվեստական լեզվի ըմբռնումը, դրա և խոսակցական լեզվի փոխհարաբերությունը գրական լեզվի զարգացման տարրեր փուլերում, գեղարվեստական լեզվի յուրահատկությունները, խոսքի մշակների դերը դրա զարգացման գործում, գրողի ստեղծագործական լարերատորիայի ուսումնասիրության կարևորությունը նրա լեզվի ու ռեժիսորական լեզվաբանության, գլխավորապես լեզվի գեղարվեստական գործառույթի պրոբլեմների ոլորտին առհասարակ: Հարցերի քննությունը հեղինակին հանգեցրել է միանգամայն նոր ու շատ կարևոր եզրակացությունների: Այստեղ հնարավոր չէ դրանց մասին շատ թե քիչ ամբողջական խոսք ասել: Բավարարվենք դրանցից մեկի մատնանշումով, որը, իբրև հեղինակի համար ելակետային նշանակություն ունեցող սկզբունք, զգալի շահով պայմանավորել է գրախոսվող ուսումնասիրության նպատակաուղղվածությունն ու բովանդակությունը: Խոսքը վերաբերում է գրական լեզվի հիմնական տարրերակային ձևերից մեկի՝ գեղարվեստական լեզվի ձևավորմանը և այդ գործում առավել կարևոր նշանակություն ունեցող խոսքի մշակի դերի գնահատմանը: Հեղինակին հետ, երբ արդեն ձևավորված են ինքնա դրա նորմաները, գեղարվեստական լեզուն աննախադեպ աշխույժ զարգացում է ցուցաբերում: Այդ շրջանում գործող գրական մեծությունը ամփոփում է «հիմնականում է (սինթետիկ է) գեղարվեստական լեզվի ուղղությամբ նախորդ հեղինակների ու ժամանակակիցների կատարած աշխատանքի արդյունքները, վճռականապես

դնում է դրական լեզվից գեղարվեստական լեզվի սահմանազատման խնդիրը, դառնում է դրա հիմնադիրը՝ գեղարվեստական լեզվի հիմնադիրը» (էջ 32)։ Մեկնաբանելով, թե ինչ բովանդակությամբ պետք է հասկանալ «հիմնադիր» հասկացությունը, հեղինակը վկայակոչում է խոսքի այն անզուգական վարպետներին, որոնց լեզվամշակման գործունեությունը բերել է իրեն նման հզորակացության։ «Ռուս գրականության մեջ, կարծում ենք, այդպիսի ծառայություն է ունեցել Ա. Ս. Պուշկինը (թեև նրան հաճախ գրական լեզվի հիմնադիր են համարում), հայ գրականության մեջ՝ Նովի. Թումանյանը» (էջ 32)։ Այստեղ մեկ անգամ ևս ընդգծենք, որ հեղինակի հիմնական նպատակն ըստ էության այլ բան չի եղել, քան Թումանյանի ծառայության այդ նշանակության բացահայտումը, հիմնավորումը։ Քննվում է նախաթուղթական կանոնների հիմնական գրականության մեջ լեզվի մշակման հիմնական՝ բարրապատման (Արուսյան, Պոռյան, Սունդուկյան) և գրական (Նալբանդյան, Շահադիզ, Աղայան, Նովիկանյան, Բաճի) ուղղությունների լեզվամշակման գործունեությունը, ցույց է տալիս, թե որանք որքանով են նպաստել գեղարվեստական լեզվի սահմանազատմանը։ 80-ական թվականներին վերջերին այդ երկու ուղղությունները գեղարվեստական գրականության լեզվի մշակման հարցում հասնելով որոշակի արդյունքների՝ միաժամանակ հատկանշվում էին «միակողմանիությամբ պայմանավորված թերություններով» (էջ 87)։ Դա չէր կարող բացասական լանդշաֆտաբան լեզվի հետագա զարգացման գործում, ուստի և, ինչպես հեղինակն է նշում, այդ ուղղությունների համադրումը անխուսափելի անհրաժեշտություն էր դարձել, որին և ձեռնամուխ է լինում Նովի. Թումանյանը։

Աշխատության երկրորդ բաժինը (էջ 88—317) նվիրված է Թումանյանի լեզվամշակման հայացքների ու գործունեության լուսաբանմանը, նրա լավագույն գործերի լեզվաոճական վերլուծությանը։ Ուսումնասիրությունը հեղինակին հանդիպել է այն հզորակացության, որ Թումանյանի լեզուն ուղղագիծ ընթացք չի ունեցել։ Նա առաջարկում է իր շրջանաբաժանումը՝ որոնումներ շրջան (1880—1886 թթ.), համադրման շրջան (1887—1900 թթ.), գեղարվեստական լեզվի ձևավորման և հետագա զարգացման շրջան (1900—1923 թթ., էջ 313)։ Այսպիսի ելակետով մեկնաբանելով Թումանյանի 80—90-ական թվականների գործունեությունը՝ հետազոտողը համոզիչ վերլուծություններով ցույց է տալիս, որ Թումանյանը այդ տասնամյակներում լեզվի մշակման երկու հիմնական ուղղություններից և ոչ մեկին անվերապահորեն չի հարել, որանցից և ոչ մեկը չէի դիտել որպես իր գեղագիտական իդեալի արտահայտություն և ոչ էլ ժխտել է բացարձակապես (էջ 88)։ Այդ շրջանի ստեղծագործությունների լեզվի ուսումնասիրությունից արվում են կարևոր հետևություններ. Թումանյանը հաստատում է իրականացնում է լեզվամշակման իր սկզբունքները նախորդ շրջանի գեղարվեստական նվաճումների ստեղծագործական յուրացման, ռեալիստական մեթոդի հետևողականորեն կիրառման, ժողովրդական բանավոր ստեղծագործության նկատմամբ նոր մոտեցում ցուցաբերելու, գեղարվեստական լեզուն ժողովրդական կենդանի խոսքի օգտագործումով մշակելու ճանապարհով։ Նրա ստեղծագործական վերելքը պայմանավորված էր լեզվամշակման երկու ուղղությունների համաձուլումով, լեզվական միջոցների՝ գեղագիտական պահանջներին համապատասխան արդյունավետ օգտագործումով, խոսքի անհատականության ուժեղացումով, բառի իմաստային-արտահայտչական արժեքի բացահայտումով, բարբառների նկատմամբ սկզբունքային նոր մոտեցում ցուցաբերելու և այլ միջոցներով։

Թումանյանական խոսքի կատարելագործումը և հիմնական յուրահատկությունները գլխում (էջ 193—245) ամփոփ, սակայն բովանդակալից կշռադատումներով տրվում է Թումանյանի գաղափարական, գեղագիտական իմացության ծավալման և տաղանդի հասունացման շրջանի ստեղծագործական աշխատանքի բնութագրերը։ Այդ շրջանում բանաստեղծը ձեռնամուխ է լինում իր երկերի, հատկապես պոեմների վերջնական մշակման բարդ ու պատասխանատու աշխատանքին (էջ 196), որը հիմնականում ծավալվում է դարասկզբում։ Բարեխղճությամբ ու նրբանկատությամբ Ս. Մելքոնյանը արժեքավորում է Թումանյանի ստեղծագործական աշխատանքի բնորոշ կողմերից մեկը՝ բառի վրա մշտական ու մանրակրկիտ աշխատանք կատարելը։ Սկզբնական տարբերակների և դրանց զանազան փոփոխությունների ենթարկված վերջնական տեքստերի զուգադրական քննությամբ ցույց է տրվում, թե հանճարեղ լուսնյակ ինչպիսի աշխատանքի շնորհիվ է 90-ական թվականներին նվաճված լեզվաորակը ներքին բարելավման ենթարկել, հասել գեղարվեստական խոսքի անթերի կատարելության։ Այդ աշխատանքի նշանակությունը մեծ է եղել նաև Թումանյանական խոսքի հիմնական յուրահատկությունների ապահովման հարցում։ Ընդ որում, այստեղ վերլուծվող փաս-



տևրը հարուստ են ու բազմազան, տիպական ու հատկանշական, իսկ հեղինակի մեկնաբանությունները՝ գիտականորեն խորը, տրամաբանորեն կուռ ու համոզիչ:

Գրախոսվող աշխատության կարևոր ու հետաքրքրական բաժիններից է վերջին գլուխը՝ «Բառի կյանքը» պատկերավոր խորագրով և Թումանյանից վերցրած այս շատ խոսուն բնաբանով: «Վաղուց, վաղուց կար ասված, բայց կյանք տվի ես բառինս: Հիրավի, բառը կյանք ունի և պատմություն: Առանց այդ պատմությունն իմանալու, թեկուզ ոչ մեծ ժամանակահատվածում, թեկուզ մի հեղինակի ստեղծագործությունների սահմաններում, առհասարակ դժվար է ճիշտ պատկերացում կազմել այդ հեղինակի, առավել ևս՝ Թումանյանի նման մեծ անհատականության լեզվի մասին: Այո՛, «Բանաստեղծի համար բառը մի աշխարհ է և այդ պիսին պիտի լինի այն նաև լեզվաբանի համար, որպես ուսումնասիրության նյութ: Այդ գիտակցությամբ էլ Ս. Մելքոնյանը հանգամանորեն քննում է ժանրային, խոսքային, իրադրական և բազմաթիվ այլ հանգամանքներով պայմանավորված բառագործածության կարևոր խնդիրները՝ մակդիրային զարդարում խոսքի գործածության սահմանափակում և բառի զուգորդական նշանակությունների վրա խարսխված խոսքի գործածության ուղիտի ընդլայնում, խոսքի հուզական հագեցվածության ուժեղացում, դրական մշակված արտահայտչամիջոցների դերի բացահայտում, բառ-խորհրդանիշների գործածություն, կերպարների խոսքի անհատականացում և տիպականացում, բառի գործածության հաճախականության արժեքավորում և այլն: Մասնավորապես բարձր գնահատականի է արժանի այն աշխատանքը, որ կատարել է ուսումնասիրողը գրական լեզվամիջոցների օգտագործման հարցում թումանյանական վերաբերմունքի ինքնատիպությունը բացահայտելու ուղղությամբ:

Հայ բանասիրության մեջ բազմիցս արծարծվող, հաճախ բանավեճի առարկա դարձած հարցերից մեկն այն է, թե մեր գրողներից ու բանաստեղծներից որի լեզվամշակման գործունեությանը ունենում է հետքեր՝ իբրև հիմնական կողմնորոշիչ նշանակություն ունեցող օրինակի, նրանցից որի փորձն ավելի շատ տվյալներ ունի ստեղծագործորեն յուրացնելու համար: Ինչպես հայտնի է, այդ հարցին տարբեր պատասխաններ են տրվել: Ելակետ ունենալով հատկապես Ա. Բակունցի, Պ. Սեակի համապատասխան դատողությունները՝ Մելքոնյանը հիմնավորում է այն տեսակետը, որ Թումանյանի «լեզվամշակման ավանդների արդիական նշանակության սահմանափակումը կամ ժխտումը զուրկ է իրական հիմքից» (էջ 316): Համապատասխան ողջ նյութն ուսումնասիրված և շարադրված է հենց այն նպատակադրմով, որ գործնականորեն լավագույն ձևով հիմնավորվի այդ տեսակետը, ապացուցվի, որ թումանյանական լեզվաշինությունը և՛ տեսական, և՛ գործնական դրսևորումով մեր գեղարվեստական լեզվի զարգացման մայր ճանապարհն է: Թումանյանի լեզվամշակման գործունեության նորոշիչ մեկնարանումը, որ այնքան հաջողությամբ է կատարված սույն աշխատության մեջ, իսկապես շի կարող կարևոր դեր շունենալ մեզ հետաքրքրող խնդրի՝ բացահայտումն առավել խորացնելու գործում:

Ս. Մելքոնյանի այս աշխատությունը տարիների անխնշ պրպտումները արդյունք է: Իր հարցադրումների ու լուծումների թարմությամբ ու ինքնատիպությամբ այն ներդրում է ոչ միայն հայագիտության մեջ, այլև որոշակի իմաստով՝ առհասարակ գեղարվեստական լեզվի ու ոճաբանական ուսումնասիրությունների բնագավառում: Իհարկե, աշխատության ոչ բոլոր դրույթներն ու նկատառումներն են, որ կարող են անառարկելիորեն ընդունվել: Նյութի գիտական մշակման իր մեթոդով, բազմակողմանի վերլուծություններով, անաշու ու տրամաբանական հետևություններով, կուռ շարադրանքով այս աշխատությունը կարող է օրինակ ծառայել առանձին գրողների ու բանաստեղծների լեզվի ու ոճի ուսումնասիրության և ընդհանրապես գեղարվեստական գրականության լեզվի տեսական ու գործնական խնդիրներին նվիրված գիտական աշխատությունների համար:

ՀԱՅԿ ԱՄԱՆՅԱՆ

Բաճառիսկան գիտությունների դոկտոր